ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2026թ. պետական բյուջեի վերանայված նախագծի վերաբերյալ

Աղ.1: ՀՆԱ-ի հիմնական ցուցանիշներ

2026 թվականի պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխություններ չեն նախատեսվել

մլրդ դրամ

	2025	2026	2027	2028
	Սպասում	Նախագիծ	Ծրագիր	Ծրագիր
Անվանական ՀՆԱ	10,997.1	11,933.7	12,952.8	14,050.8
Իրական ՀՆԱ-ի աճ, %	5.2	5.4	5.4	5.3
ՀՆԱ-ի դեֆլյատոր	2.6	3.0	3.0	3.0
Անվանական ՀՆԱ-ի աճ, %	7.9	8.5	8.5	8.5

Ստորև ներկայացվում է 2026թ պետական բյուջեի վերջնականացված նախագծի փոփոխությունները ԱԺ ներկայացված սկզբնական տարբերակի համեմատ:

Աղ. 2: Բյուջեի հիմնական ցուցանիշներ

մլրդ դրամ

	2024	2025	2026 բյուջեի նախագիծ		Տարբերությունը	2027 Ծրագիր	2028 Ծրագիր
	Փաստ	Սպասում	Նախնական	Վերջնական			
1. Պետական բյուջեի եկամուտներ	2,579.2	2,832.8	3,091.1	3,090.9	(0.2)	3,352.6	3,638.2
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	2,390.9	2,690.4	2,972.8	2,972.8	0.0	3,244.9	3,533.9
Այլ եկամուտներ	161.6	121.7	97.7	98.3	0.6	100.4	100.6
Պաշտոնական դրամաշնորհներ	26.7	20.7	20.5	19.7	(0.8)	7.3	3.7
2. Պետական բյուջեի ծախսեր	2,955.3	3,432.6	3,628.5	3,627.6	(0.9)	3,801.0	4,030.6
Ընթացիկ ծախսեր	2,413.6	2,702.8	2,924.5	2,923.5	(0.9)	3,082.0	3,227.6
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	541.1	729.9	704.1	704.1	0.0	719.1	803.1
3. Պետական բյուջեի դեֆիցիտ	376.1	599.8	537.5	536.8	(0.7)	448.4	392.4
4. Կառավարության պարտքը	4,892.8	5,565.7	6,382.4	6,310.3	(72.1)	6,951.5	7,544.2

Աղ. 3: Կշիռը ՀՆԱ-ում տոկոսով

Անվանական ցուցանիշների փոփոխությունը չեն հանգեցրել եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի գծով ՀՆԱ-ի նկատմամբ կշռի փոփոխության

	2024 Փաստ	2025 Սպասում	2026 Նախագիծ	2027 Ծրագիր	2028 Ծրագիր
1. Պետական բյուջեի եկամուտներ	25.9	25.8	25.9	25.9	25.9
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	24.9	24.5	24.9	25.1	25.2
Այլ եկամուտներ	0.8	1.1	0.8	0.8	0.7
Պաշտոնական դրամաշնորհներ	0.2	0.2	0.2	0.1	0.0
2. Պետական բյուջեի ծախսեր	30.4	31.2	30.4	29.3	28.7
Ընթացիկ ծախսեր	24.5	24.6	24.5	23.8	23.0
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	5.9	6.6	5.9	5.6	5.7
3. Պետական բյուջեի դեֆիցիտ	4.5	5.5	4.5	3.5	2.8

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2026թ նախնական նախագծի (53.5 տոկոս) համեմատ նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 52.9 տոկոս:

Պետական բյուջեի եկամուտները նախատեսվում են 3,090.9 մլրդ դրամ, որը նախնական տարբերակի համեմատ նվազել է 0.2 մլրդ դրամով:

- Պաշտոնական դրամաշնորհները նվազել են 0.8 մլրդ դրամով, որը պայմանավորված է նպատակային և աջակցության դրամաշնորհների փոխարժեքի փոփոխությամբ, ինչպես նաև նպատակային դրամաշնորհների վերանայմամբ:
- Այլ եկամուտների 0.6 մլրդ դրամով ավելացումը պայմանավորված է առանձին եկամտատեսակների վերագնահատումով, ինչպես նաև փոխարժեքի փոփոխությամբ:

Պետական բյուջեի պակասուրդը պահպանվել է ՀՆԱ-ի 4. 5%-ի մակարդակում և կազմում է 536.8 մլրդ դրամ, որը առաջին փուլի համեմատ նվազել է 0.7 մլրդ դրամով:

Պետական բյուջեի ծախսերը նախատեսվում են 3,627.6 մլրդ դրամ, որից ընթացիկ ծախսերը 2,923.5 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսեր 704.1 մլրդ դրամ: Բյուջեի ծախսերը առաջին փուլի համեմատ նվազել է 0.9 մլրդ դրամով՝ ընթացիկ ծախսերի մասով:

- Ծախսերի նվազեցումը հիմնականում պայմանավորված է փոխարժեքի վերագնահատմամբ:

Միաժամանակ, բացի վերը նշվածից պետական բյուջեի ծախսերում տեղի են ունեցել ստորև ներկայացվող ԲԳԿ–ների գծով փոփոխություններ՝ հետևյալ ուղղություններով.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության գծով ավելացվել են **38.5 մլն դրամով (**ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» դրամաշնորհային միջոցառման համաֆինանսավորման մասով):
- ՀՀ արդարադատության նախարարության գծով ավելացվել են **47.0 մլն դրամով (**լրացուցիչ 5 հանրային պաշտպանի հաստիքների գծով աշխատավարձի և պահպանման ծախսերի համար), ավելացվել են նաև **1,200.0 մլն դրամով (**դատապարտված և կալանավորված անձանց ուղեկցումներն իրականացնելու նպատակով (նախկինում գործառույթն իրականացվել է ՆԳՆ-ի կողմից), ի հաշիվ ՊՖ-ում ռեզերվացված գումարի):
- ՀՀ վարչապետի աշխատակազմի գծով ավելացվել են **130.0 մլն դրամով** (Ֆրանկոֆոնիայի 2027 թվականի խաղերի ազգային կոմիտեի աշխատանքների համակարգման համար) ի հաշիվ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջոցների, ինչպես նաև ավելացվել են **57.3 մլն դրամով (**«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատողների աշխատավարձի 20%-ով բարձրացմամբ):

- Բարձրագույն դատական խորհուրդի գծով ծախսերը ավելացվել են **34.5 մլն դրամով** («Դատալեքս» ծրագրի սպասարկման ծախսերի համար) ի հաշիվ Արդարադատության նախարարության միջոցների:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գծով ավելացվել են **341.6 մլն դրամով (**Էկոպարեկային ծառայության ՀՀ Տավուշի մարզային վարչությունների շենք-շինությունների կապիտալ վերանորոգման, շինարարության և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման ծախսերի համար):
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գծով ավելացվել են **302.5 մլն դրամով (**ՌԴ կողմից ՀՀ-ին անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում մասով ավելացվել է համաֆինանսավորման միջոց նույն չափով նվազեցվել են դրամաշնորհային միջոցները):
- ՀՀ առողջապահության նախարարության գծով ավելացվել են **1,000.0 մլն դրամով (**ԱՀԱ-ի շահառու հանդիսացող վարձու աշխատողների 2026թ.-ի ապահովագրավճարի մասնակի սուբսիդավորման համար):
- ՀՀ ֆինանսների նախարարության ծախսերը նվազեցվել են **3,310.6 մլն դրամով (**Պետական պարտքի կառավարման ծրագրի վերագնահատման արդյունքում):
- Հանրային հեռարձակողի խորհուրդի գծով ավելացվել են շուրջ **8.0 մլն դրամով** (Պայմանավորված է դատական գործերի գծով իրավաբանական գործառույթների իրականացման և արտասահմանյան գործուղումների ծախսերի ավելացմամբ):
- ՀՀ մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի գծով ավելացվել են **10.0 մլն դրամով** (պահպանման և սպասարկման գծով առաջացած լրացուցիչ ծախսերի համար):
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով իրականացվել են միջոցառումների ֆինանսական միջոցների տեղափոխություններ

1,269.0 մլն դրամով (ոլորտի ՊՈԱԿ-ներում աշխատավարձերի բարձրացման նպատակով):

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գծով իրականացվել են միջոցառումների ֆինանսական միջոցների տեղափոխություններ **3,782.2 մլն դրամով**:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գծով իրականացվել են միջոցառումների ֆինանսական միջոցների տեղափոխություններ 752.3 մլն դրամով (հագուստի ձեռքբերման և տեխնիկական հագեցվածության համար):

ԱԺ պատգամավորների առաջարկների վերաբերյալ

Ազգային ժողովի պատգամավորներից քննարկումների ընթացքում ստացել ենք ընդհանուր առմամբ 30 առաջարկներ և հարցումներ, որոնց մեծ մասը վերաբերում էին այս կամ այն միջոցառման մեջ ծախսերի ավելացմանը՝ շուրջ 4.9 մլրդ դրամի չափով: Դրանք մանրակրկիտ ուսումնասիրվել են ճյուղային նախարարությունների կողմից, և դրանց առնչությամբ տրամադրվել են մանրամասն պարզաբանումներ, որոնք ներկայացված են օրենքի նախագծին կցված ամփոփաթերթում: Առաջարկներից 15-ը ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել են (4.2 մլրդ դրամի չափով), 3 հարցումներին տրվել են պարզաբանումներ, 12 առաջարկներ չեն ընդունվել, որոնց վերաբերյալ նաև ներկայացված են մանրամասն պարզաբանումներ: